ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

06 հունիսի 2017թ. **N 285-Ա**
ք.Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎՐՈՊԱ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՏՈՐԴՆԵՐ Լ.ԲԱՅԱԴՅԱՆԻ, Ս.ԲԱԼԽՅԱՆԻ ԵՎ Ս.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «Իրավունքի Եվրոպա Միավորում», հասարակական կազմակերպության և դիտորդներ Լ.Բայադյանի, Ս.Բալխյանի և Ս.Մանուչարյանի դիմում-բողոքը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Բողոքաբերների իրավական դիրքորոշումը և ներկայացված պահանջը

«Իրավունքի Եվրոպա Միավորում հասարակական կազմակերպության և դիտորդներ՝ Լ.Բայադյանի, Ս.Բալխյանի և Ս.Մանուչարյանի 22.05.2017թ. դիմում-բողոքը Կենտրոնական ընտրական հանձնաժողովում մուտքագրվել է 2017թ. մայիսի 22-ին:

Բողոքաբերները բողոքարկում են թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 19.05.2017թ. թիվ 18-Ա որոշումը: Ներկայացված դիմում-բողոքում, մասնավորապես, նշված է

«1. Թիվ 7 տարածքային հանձնաժողովի 19.05.2017թ. թիվ 18-Ա որոշմամբ մերժվել է «Իրավունքի Եվրոպա Միավորում» հասարակական կազմակերպության և դիտորդներ՝ Լ.Բայադյանի, Ս.Բալխյանի և Ս.Մանուչարյանի 16.05.2017թ. դիմում-բողոքով վարչական վարույթի հարուցումը,

Դիմում(ներ)ը ներկայացված (են)է եղել հետևյալ բովանդակությամբ.

1.1 Լիլիա Լորիկի Բայադյանը 14.04.2017թ. գտնվել է թիվ 7/29 տեղամասում որպես դիտորդ: Վերջինիս՝ որպես դիտորդի իրավունքների խախտումները դրսևորվել են տեղամասային հանձնաժողովի հետևյալ գործողություններով (անգործությամբ). Ժամը 08:15-ի և 09:00-ի սահմաններում դիտորդը դիմել է հանձնաժողովի նախագահին իրեն գրանցամատյանը (դրա՝ տեղամասում գրանցված անձանց անունների էջը) լուսանկարելու իրավունք ընձեռելու պահանջով, սակայն հանձնաժողովի նախագահը երկու անգամն էլ հրաժարվել է ապահովել այդ հնարավորությունը՝ պատճառաբանելով, որ նա իրավունք ունի բացառապես քաղվածքներ ու պատճեններ կատարել:

Խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը չի գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում: Դրա կապակցությամբ դիտորդը ունի ապացույց՝ ձայնագրություն:

Արդյունքում խախտվել են ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված դիտորդի իրավունքները:

1.2 Լիլիա Լորիկի Բայադյանը 14.04.2017թ. գտնվել է թիվ 7/29 տեղամասում որպես դիտորդ: Վերջինիս կողմից դիտարկված խախտումները հետևյալն են. Ժամը 11:20-ի դրությամբ արդեն երկրորդ անգամ բացահայտվել է դեպք, երբ հանձնաժողովի կին անդամը, երկու քվեաթերթիկ է տվել ընտրողներին, ընդ որում՝ երկրորդ դեպքում դիտորդը նկատել է, որ այն արդեն իսկ լրացված է, քվեարկված սակայն չի նկատել հստակ ում օգտին: Ընտրողների կողմից իրենց երկու քվեաթերթիկ տալու դեպքերի բարձրաձայնելուց հետո հանձնաժողովի անդամը, ով դրանք բաժանել է, ժեստերով փորձել է հասկացնել ընտրողներին, որպեսզի դեպքերը չբարձրաձայնեն: Հանձնաժողովի նախագահն իր հերթին երկու դեպքում էլ վերցրել է

քվեաթերթիկները և ավելորդները ոչնչացրել պատռելու ճանապարհով: Հանձնաժողովի անդամը, ով տրամադրել է այդ քվեաթերթիկները հրաժարվել է ներկայանալ և թաքցրել է վկայականը, սակայն դիտորդը լուսանկարել է վերջինիս: Հետագայում դիտորդը պարզել է հանձնաժողովի անդամի անունը՝ Գրիգորյան Նվարդ:

Հանձնաժողովի նախագահը տեղեկացված է խախտման մասին, սակայն որևէ գործողություն չի ձեռնարկվել խախտումները կանխելու/դադարեցնելու ուղղությամբ:

Խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը գրանցվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում մասնակի, հատկապես՝ հրաժարվել են գրանցել հանձնաժողովի անդամի անունը, ով տրամադրել է ավելորդ քվեաթերթիկները, ինչպես նաև այն, որ երկրորդ դեպքում քվեաթերթիկներից մեկի վրա առկա է եղել նշում, այն քվեարկած է եղել:

1.3 Լիլիա Լորիկի Բայադյանը 14.04.2017 գտնվել է թիվ 7/29 տեղամասում որպես դիտորդ: Վերջինիս կողմից դիտարկված խախտումները հետևյալն են. Անձը ստորագրել է մեկ այլ ընտրողի տողում վերջինիս փոխարեն: Դեպքը բացահայտելուց հետո հանձնաժողովի անդամը սլաք է տարել նշված տողից դեպի ընտրողի իրական տողը: Խախտումը գրանցվել է գրանցամատյանում:

1.4 Լիլիա Լորիկի Բայադյանը 14.04.2017 գտնվել է թիվ 7/29 տեղամասում որպես դիտորդ: Վերջինիս կողմից դիտարկված միջադեպը հետևյալն է. ժամը 14:35-ի սահմաններում ընտրողը լուսանկարել է քվեաթերթիկը: Վերջինիս նոր ծրար և քվեաթերթիկներ են տրամադրվել: Դեպքը գրանցվել է գրանցամատյանում:

1.5 Սարգիս Մեհրանի Բալխյանը 14.04.2017թ. գտնվել է թիվ 7/33 տեղամասում որպես դիտորդ: Վերջինիս կողմից դիտարկված խախտումը հետևյալն է. ժամը 15:00-ի սահմաններում կողմնակի անձանց կողմից իրականացվել է ուղղորդում, մոտավորապես 30 րոպեի ընթացքում երկու-երեք խումբ քաղաքացիների են բերել քվեարկելու: Հանձնաժողովի նախագահը դուրս է հանել ուղղորդման կազմակերպիչներին: Դեպքի վերաբերյալ առկա են ապացույցներ:

Խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը չի գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Արդյունքում խախտվել են նաև ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված դիտորդի իրավունքները:

1.6 Լիլիա Լորիկի Բայադյանը 14.04.2017թ. գտնվել է թիվ 7/28 տեղամասում որպես դիտորդ: Վերջինիս կողմից դիտարկված խախտումը հետևյալն է. ժամը 16:50-ի սահմաններում թիվ 7/29 տեղամասի հանձնաժողովի անդամը գտնվել է 7/28 տեղամասում՝ հանձնաժողովի այլ անդամի կողքին: Դիտորդի այն հարցին, թե ինչ գործառույթ է իրականացնում այս պահին, չի պատասխանել և հեռացել է: Քիչ անց վերջինս կրկին վերադարձել է: Հանձնաժողովի նախագահը տեղեկացված է խախտման մասին և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը, սակայն որևէ գործողություն չի ձեռնարկվել: Վերադառնալով 7/29 տեղամաս, դիտորդը պարզել է, որ հանձնաժողովի հիշյալ անդամը տվյալ ժամանակամիջոցում պատասխանատու էր քվեատուփի և ինքնասոսնձվող դրոշմանիշների համար: Հանձնաժողովի անդամի անունը և ազգանունը ճշտել չի հաջողվել, վերջինս հրաժարվել է ներկայանալ: Դիտորդը խախտումը/խախտման մասին գնահատականը գրանցամատյանում գրանցելու հնարավորություն չի ունեցել, քանի որ հանձնաժողովի նախագահը վերցրել էր գրանցամատյանը և այլ վայրում պատասխանում էր ոստիկանների հարցերին, ըստ դիտորդին հայտնված տեղեկությունների՝ երկու լրացուցիչ քվեաթերթիկների տրամադրման դեպքի կապակցությամբ: Հանձնաժողովի նախագահի տեղամաս վերադառնալուն պես դիտորդը պահանջել է գրանցել խախտումը/խախտման մասին գնահատականը, սակայն հանձնաժողովի նախագահը չի ապահովել գրանցումը, պատճառաբանելով, թե հանձնաժողովի անդամը մյուս տեղամաս գնացել է զուգարանից օգտվելու համար:

Նշենք, որ թիվ 7/29 տեղամասում ևս առկա է եղել զուգարան, ինչը վկայում է Հանձնաժողովի նախագահի կողմից բերված պատճառաբանության անհիմն լինելու մասին: Դեպքի վերաբերյալ առկա է ապացույց՝ ձայնագրություն:

Արդյունքում՝ խախտվել են նաև ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված դիտորդի իրավունքները:

1.7 Լիլիա Լորիկի Բայադյանը 14.04.2017թ. գտնվել է թիվ 7/29 տեղամասում որպես դիտորդ: Վերջինիս կողմից դիտարկված խախտումը հետևյալն է. գրանցամատյանում հանձնաժողովի անդամների հերթափոխի վիճակահանության արդյունքների գրանցման էջում նշված չեն հանձնաժողովի անդամների անուն, ազգանունները՝ միայն անհատական կնիքներով են կնքված համապատասխան տողերը:

Հանձնաժողովի նախագահը տեղեկացված է խախտման մասին և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը, սակայն որևէ գործողություն չի ձեռնարկվել: Խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը չի գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Հանձնաժողովի նախագահը նշվածը պատճառաբանել է նրանով, որ հանձնաժողովի անդամների անուն ազգանունները նշված են գրանցամատյանի՝ անհատական կնիքների տրամադրման տվյալները բովանդակող էջում:

Արդյունքում խախտվել են նաև ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված դիտորդի իրավունքները:

1.8 Լիլիա Լորիկի Բայադյանը 14.04.2017թ. գտնվել է թիվ 7/29 տեղամասում որպես դիտորդ: Վերջինիս կողմից դիտարկված խախտումը հետևյալն է. ժամը 20:17-ի դրությամբ ամփոփման նիստի ժամանակ հանձնաժողովի անդամների ահնատական կնիքները չեն հավաքվել, սկզբում տպվել է տեխնիկական սարքի միջոցով ամփոփիչ տեղեկանքը, հաշվարկվել են կտրոնները: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը, սակայն որևէ գործողություն չի ձեռնարկվել: Խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը չի գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Արդյունքում խախտվել են նաև ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված դիտորդի իրավունքները:

1.9 Սարգիս Մեհրանի Բալխյանը 14.04.2017թ. գտնվել է թիվ 7/33 տեղամասում որպես դիտորդ: Վերջինիս կողմից դիտարկված խախտումը հետևյալն է. ժամը 20:30-ի սահմաններում մինչև քվեարկության մասնակիցների թիվը հաշվարկելը, տեխնիկական սարքի միջոցով արդեն տպվել է ամփոփիչ տեղեկանքը և հավաքվել են սարքավորումները: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը, սակայն որևէ գործողություն չի ձեռնարկվել: Խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը չի գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Արդյունքում խախտվել են նաև ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված դիտորդի իրավունքները:

1.10 Սիրանուշ Մանուչարյանը 14.05.2017թ. գտնվել է թիվ 7/43 տեղամասում որպես դիտորդ: Վերջինիս՝ որպես դիտորդի իրավունքների խախտումները դրսևորվել են տեղամասային հանձնաժողովի հետևյալ գործողություններով (անգործությամբ). Դիտորդին 7.40-8.00 արգելվել է ընտրողների գրանցման տեխնիկական սարքավորումը հետնամասի կողմից դիտարկելու, համապատասխան հատվածում ազատ տեղաշարժվելու և լուսանկարելու իրավունքի իրականացումը: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը, սակայն նախագահի կողմից, փոխարենը, ստեղծվել են անհիմն խոչընդոտներ: Դիտարկումը թույլատրվել է միայն Նախագահի կողմից հեռախոսազանգով ճշտումներ կատարելուց հետո, խախտումը գրանցամատյանում ևս գրանցվել է Նախագահի կողմից անհիմն խոչընդոտներ ստեղծելուց հետո: Գրանցամատյանի համապատասխան էջը

լուսանկարելու դիտորդի իրավունքը ևս որոշ ժամանակահատված սահմանափակվել է և թույլատրվել է միայն Նախագահի կողմից հեռախոսազանգով ճշտումներ կատարելուց հետո: Արդյունքում խախտվել են նաև դիտորդի ՀՀ օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ իրավունքները:

1.11 Սիրանուշ Մանուչարյանը 15.04.2017թ. գտնվել է թիվ 7/43 տեղամասում որպես դիտորդ: Վերջինիս կողմից դիտարկված խախտումները հետևյալն են.

Ա. Քվեարկող տարեց կինը մոտեցել է քվեատուփի մոտ՝ դրա մեջ քվեարկության ծրարը նետելու նպատակով: Նրա մոտ բացի քվեարկության ծրարում առկա քվեաթերթիկից եղել է նաև երկրորդ քվեաթերթիկ, որը նա փորձել է դուրս հանել տեղամասային կենտրոնից: Քվեարկության ծրարում առկա քվեաթերթիկը եղել է Հանրապետական կուսակցության օգտին: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը, սակայն որևէ գործողություն չի ձեռնարկվել: Դիտորդը պահանջել է գրանցել խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում: Հանձնաժողովի նախագահը փորձել է համոզել, որ այս անգամ չարձանագրեն, քանզի սխալմունք է տեղի ունեցել, և քվեարկողին ավելորդ քվեաթերթիկ է տրամադրվել:Առաջարկել է արձանագրել որպես խախտում, եթե երկրորդ անգամ նման բան կրկնվի: Դիտորդի բազմակի պնդումներից հերո խախտումը գրանցվել է գրանցամատյանում: Դրան ի պատասխան, հանձնաժողովի նախագահը և քարտուղարը փորձել են կազմել մակ այլ արձանագրություն: Հանձնաժողովի քարտուղարը դուրս է եկել քվեարկության սենյակից: Վերադարձել է գրված արձանագրությամբ, որում նշված է, որ երկրորդ քվեաթերթիկը տրամադրվել է ընտրողին հանձնաժողովի անդամի կողմից պատահաբար:

Բ. Քվեախցիկի ներսում գտնվել է չօգտագործված քվեաթերթիկ: Քվեարկողն ասել է, որ այդ քվեաթերթիկը եղել է ներսում, երբ նա մտել է քվեախցկ: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին: Խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականն արձանագրվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Գ. Քվեարկության արդյունքների ամփոփման նիստի ժամանակ արձանագրվել է, որ ընտրողների ցուցակում գրանցված քվեարկության մասնակցած ընտրողների թիվը չի համապատասխանում տեխնիկական սարքով գրանցված ընտրողների թվին: Խախտումը գրանցվել է գրանցամատյանում:

Դ. Քվեարկության արդյունքների ամփոփման նիստի ժամանակ դիտորդ արձանագրել է, որ քվեարկության չորս ծրարների մեջ եղել են երկուական քվեաթերթիկ, որոնցից յոթը քվեարկված է եղել Հանրապետական կուսակցության օգտին, իսկ մեկը եղել է դատարկ: Քվեարկության ծրարներից մեկի մեջ թղթի կտոր է դրված եղել: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին: Խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականն գրանցվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Ե. Քվեարկության արդյունքների ամփոփման նիստի ժամանակ դիտորդն արձանագրել է, որ թվով 58 քվեաթերթիկների վրա նշումը կատարված է եղել կարմիր գրիչով, թվով 27 քվեաթերթիկ ունեցել է կանաչ նշում, թվով 29 քվեաթերթիկ ունեցել է սև նշում և 3 քվեաթերթիկ նշված է եղել նարնջագույն գրիչով: Բոլոր նշված քվեաթերթիկները քվեարկված են եղել ՀՀԿ-ի օգտին:

1.12 Ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգրքի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի և Քրեական օրենսգրքի դրույթներով՝դիմումատուի կողմից ներկայացվել է հետևյալ պահանջը՝ ձեռնարկել միջոցներ.

1. վերոգրյալ խախտումները համապատասխան փաստաթղթերում արձանագրելու. արդյունավետ քննություն և օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ.
2. խախտումներ կատարած անձանց և դրանք արձանագրելու և վերացնելու պատասխանատու անձանց համար օրենքով սահմանված միջոցների ձեռնարկման ուղղությամբ.

3. ըստ անհրաժեշտության, այդ թվում քրեաիրավական բնույթի խախտումները վերահասցեագրել ըստ ենթակայության.

4. քննարկել և գնահատել հիշյալ խախտման (խախտումների) ազդեցությունը քվեարկության արդյունքների վրա.

5. համապատասխան սուբյեկտների իրավունքների խախտումների արձանագրման և դրանք ըստ հնարավորության, վերացնելու ուղղությամբ:

2.Դիմումի քննությանն առնչվող էական փաստեր.

2.1 Դիմումատուի ներկայացուցիչը 2017թ. մայիսի 19-ին տարածքային ընտրական հանձնաժողով է ներկայացրել հերկյալ միջնորդությունները.

1. թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում տեղակայված թիվ 7/22, 7/28, 7/30,7/31, 7/32, 7/33, 7/43 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյանները զննելու,

2. թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում տեղակայված թիվ 7/22, 7/28, 7/30,7/31, 7/32, 7/33, 7/43 տեղամասային ընտրական հանձնաժողովներում տեսագրությունների պատճենները ստանալու և/կամ զննելու:

3. թիվ 7/22, 7/28, 7/30,7/31, 7/32, 7/33, 7/43 տեղամասային հանձնաժողովների անդամներին, ինչպես նաև վերացնել տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյաններում քվեարկության օրը քվեարկության սենյակում և տեղամասային հանձնաժողովների նիստերին ներկա գտնված և գրանցամատյանի համապատասխան էջում գրանցված անձանց, որպես վկա հրավիրելու վերաբերյալ:

4. թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի նիստի ընթացքում թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում ընդգրկված տեղամասերում դիտորդների կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ ապացույցները, որոնք ներկայացվել էին դիմումին կից էլեկտրոնային կրիչի վրա, զննելու մասին:

2.2. Ներկայացված բոլոր միջնորդությունների վերաբերյալ վիճարկվող որոշմամբ որևէ անդրադարձ չի կատարվել:

3. Դիմում բողոքի հիմքերը.

Վարչական վարույթի հարուցման մերժումը Տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից պատճառաբանվել է դիմումատու դիտորդների և դիտորդական կազմակերպության՝ դիմումում վկայակոչվող իրավունքների պաշտպանությամբ դիմելու իրավունք ունեցող իրավասու սուբյեկտներ չհանդիսանալու հանգամանքով: Մասնավորապես, տարածքային ընտրական հանձնաժողովը հղում է կատարել ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասին՝ արձանագրելով, որ յուրաքանչյուր կոնկրետ սուբյեկտի իրավունք է վերապահվում բողոքարկելու ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը), եթե նման բողոքարկումը նպատակ ունի իրականացնելու բողոքարկող սուբյեկտի խախտված իրավունքի պաշտպանությունը:

Անդրադառնալով դիմում-բողոքի 1, 5, 6, 7, 8 և 9 կետերում նշված խախտումներին,տարածքային ընտրական հանձնաժողովը գտել է, որ դրանցով խախտվել են դիտորդների սուբյեկտիվ իրվունքը՝ նրանց պահանջով խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը չի գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:Այդ մասով ընտրական հանձնաժողովը որոշում է կայցրել միջնորդել կենտրոնական ընտրական հանձնաժողովին ուժը կորցրած ճանաչել թիվ 7/29 տեղամասային հանձնաժողովների նախագահ Հովսեփ Տիգրանի Ղազարյանի և թիվ 7/33 տեղամասային հանձնաժողովների նախագահ Վարդան Ռաֆիկի Վարդանյանի ընտրական հանձնաժողովներում ընդգրկվելու որակավորման վկայականները:

Հետագայում տարածքային ընտրական հանձնաժողովը կրկին նշելով դիմում-բողոքի 1,5,6,7,8 և 9 կետերն այս անգամ եզրահանգել է, դիտորդի իրավունքների ՀՀ ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասի խախտում առկա չէ, քանի որ <<ինչպես նշված է դիմումում դիտորդը պահանջել է գռարում կատարել ամփոփման նիստի ժամանակահատվածում>> (ըստ երևույթին, հանձնաժողովը նկատի է ունեցել դիմում-բողոքի 8-րդ կետը):

Այնուհետև հղում կատարելով ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությանը, համաձայն որի՝ ոչ իրավասու անձի կողմից ներկայացված դիմումները չեն քննարկվում, դրանցով վարչական վարույթներ չեն հարուցվում և ընտրական հանձնաժողովները որոշում են կայացնում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին, տարածքային ընտրական հանձնաժողովը որոշել է դիմողների դիմում-բողոք(ներով) վարչական վարույթի հարուցումը մերժել:

3.Գտնում ենք, որ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 19.05.2017թ. թիվ 18-Ա որոշումն իրավաչափ չէ և ենթակա է մասնակի անվավեր ճանաչման հետևյալ պատճառաբանությամբ.

Դիտորդների և դիտորդական կազմակերպության՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու իրավասուբյեկտության մասով.

Դիտորդին և դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությանը՝ ընտրական իրավունքի խախտումների բողոքարկման համար ոչ իրավասու սուբյեկտ ճանաչելու հիմքով (օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների մասով) վարույթի հարուցման մերժումը հանգեցրել է ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջների խախտմանը: Մասնավորապես, դիտորդի և դիտորդական կազմակերպության՝ ընդհանուր բնույթի ընտրախախտումների (օբյեկտիվ ընտրական իրավունքի) հիմքով դիմում-բողոքներ ներկայացնելու իրավունք չունենալու վերաբերյալ տարածքային ընտրական հանձնաժողովի հետևությունը չի բխում ՀՀ Ընտրական օերնսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներից: Դիտորդների և դիտորդական կազմակերպության՝ ոչ իրավասու սուբյեկտ հանդիսանալու վերաբերյալ եզրահանգումը կատարվել է ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասին՝ ՀՀ Սահմանադրության 48-րդ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածի դրույթներին հակասող և կամայական մեկնաբանություն տալու արդյունքում:

Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք կարող է բողոքարկել ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը), եթե գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը:

Այս իրավունքն իր բովանդակային ծավալում ներառում է յուրաքանչյուր քաղաքացու՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու, ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու իրավունքը: ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված սուբյեկտների և նրանց վերապահված իրավունքների շրջանակի վերաբերյալ տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից տրված սահմանափակ և կամայական մեկնաբանությունը ուղղակիորեն հակասության մեջ է մտնում ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդված և «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածի դրույթների հետ, յուրաքանչյուր անձ պետք է ունենա նաև այս իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց:

Ընտրությունների ընթացքում արձանագրված ընտրախախտումները իրենց համակցության մեջ և/կամ բնույթով կարող են ուղղակի ազդեցություն ունենալ յուրաքանչյուր ընտրողի քվեի հասցեականության վրա, ինչպես նաև յուրաքանչյուր քաղաքացու ընտրելու իրավունքի իրացման վրա առհասարակ: Ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտ հանդիսացող յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ դիտորդի և դիտորդական կազմակերպության կողմից ներկայացված դիմում-բողոքները՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների հիմքով ենթակա են քննության վարչական վարույթի կարգով, նույն կարգով, ինչ դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտումների վերաբերյալ բողոքները՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի շրջանակներում: Հակառակ մեկնաբանությունը կհանգեցնի ընտրական իրավունքի էության խախտմանը:

- **Հասարակական կազմակերպությունների իրավասուբյեկտության մասով.**

Անդրադառնալով դիմում-բողոքը հասարակական կազմակերպության կողմից ներկայացված լինելու հանգամանքին՝ տարածքային ընտրական հանձնաժողովը գտել է, որ դիմումատու

հասարակական կազմակերպությունը սույն դիմումով իրավասու սուբյեկտ չի հանդիսանում, քանի որ հասարակական կազմակերպությունների՝ ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված իրավունքներն ամրագրված են ՀՀ ընտրական օրենսգրքի 30-րդ և 31-րդ հոդվածներով և վերաբերում են դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով հավատարմագրվելուն: Որոշմամբ արձանագրվել է նաև, որ որևէ այլ իրավունք ՀՀ ընտրական օրենսգրքով հասարակական կազմակերպությունների համար նախատեսված չէ: Ելնելով վերոգրյալից՝ տարածքային ընտրական հանձնաժողովը եզրահանգել է, որ հասարակական կազմակերպությունները կարող են ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված իրենց իրավունքների պաշտպանության նպատակով բողոքարկել բացառապես իրենց հավատարմագրմանն առնչվող՝ հավատարմագրումն իրականացնող ընտրական հանձնաժողովի ակտերը:

Գտնում ենք, որ վերոգրյալ պատճառաբանությամբ վարչական վարույթի հարուցման մերժումը ուղղակիորեն հակասում է ՀՀ ընտրական օրենսգրքի դրույթներին: Ակնհայտորեն ոչ իրավաչափ է ընտրական հանձնաժողովի փաստարկն առ այն, որ դիտորդական կազմակերպությունը հավատարմագրվելու իրավունքից, բացի որևէ այլ իրավունք Ընտրական օրենսգրքի համաձայն չունի: Առաջին հերթին դիտորդական կազմակերպությունն ունի ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք և այս իրավունքի շրջանակներում ունի թե դիտորդի սուբյեկտիվ իրավունքների խախտման և թե օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ դիմում-բողոքներ ներկայացնելու իրավունք: Դիտորդի սուբյեկտիվ իրավունքների և օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ բողոքներ ներկայացնելու իրավասուբյեկտության վերաբերյալ սույն դիմումում ներկայացված հիմնավորումները հավասարապես կիրառելի են դիտորդական կազմակերպությունների նկատմամբ: Ավելին, դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները հանդիսանում են ընտրական իրավահարաբերությունների լիարժեք ուբյեկտ: Նրանց դիտորդական առաքելությունը հանդիսանում է հանրային գործառույթ, որի նպատակն է ապահովել ընտրությունների թափանցիկությունը և նպաստել ընտրական գործընթացների պատշաճ իրականացմանը: Վերոնշյալ հանրային իրավական գործառույթի արդյունավետ իրականացումը, ի թիվս այլոց, պայմանավորված է դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների կողմից ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ դիմում-բողոքներ ներկայացնելու իրավասուբյեկտությամբ:

Ավելին, հարկ ենք համարում անդրադառնալ նաև հասարակական կազմակերպության իրավասուբյեկտության հարցին ՀՀ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների շրջանակներում: Այսպես, ՀՀ Սահմանադրական դատարանի 07.09.2010թ. ՍԴՈ-906 որոշմամբ արձանագրվել է, որ քաղաքացիական հասարակությունն ինքնուրույն և պետությունից անկախ հասարակական մեխանիզմների և հարաբերությունների համակարգ է, որը պայմաններ է ապահովում կոլեկտիվների և անհատների մասնավոր շահերի և պահանջմունքների բավարարման համար: Հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների դերը պետության և քաղաքացիական հասարակության կյանքում, առաջնորդվելով վերջիններիս գործունեության արդյունավետության բարձրացման նկատառումներով՝ սահմանադրական դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպությունների համար, որպես իրավաբանական անձ, կարող է սահմանել տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը՝ հաշվի առնելով actio popularis բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական երկրների ներկա զարգացումների միտումները:

Շեշտվել է նաև, որ. «Ուրիշի խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը սահմանելիս հարկ կլինի հաշվի առնել միայն այն հասարակական կազմակերպություններին, որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը: Այս դիրքորոշումը համահունչ է նաև «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ

օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, որի համաձայն՝ կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում":

ՀՀ Սահմանադրական դատարանի 07.09.2010թ. ՍԴՈ-906 որոշմամբ արձանագրվել է նաև, որ վարչական դատավարությունում այլոց իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքի (,,Actio popularis") առնչությամբ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներր վկայում են, որ, որպես կանոն, եվրոպական երկրներում այս ինստիտուտն իր դասական իմաստով և լրիվ ծավալով կիրառում չունի: Միաժամանակ, սահմանադրական դատարանը նման ուսումնասիրության արդյունքներով արձանագրել է, որ մի շարք երկրներում վարչական գործերով հայց ներկայացնելու իրավասության հիմնական չափանիշ է հանդիսանում «իրավական շահագրգռվածությունը»: Վերջինս դատահիրավական պրակտիկայում ստացել է այնքան լայն մեկնաբանություն, որ հասարակական կազմակերպություններին կամ քաղաքացիական նախաձեռնությամբ հանդես եկող և օրենքով սահմանված կարգով գործունեություն իրականացնող այլ միավորումների հնարավորություն է ընձեռվում հանդես գալ որոշակի խմբի կոլեկտիվ իրավունքի պաշտպանությամբ, եթե այդ պաշտպանությունը տվյալ միավորման կոնկրետ նպատակների շրջանակում է: Այսպիսի դիրքորոշում է ըստ էության արտահայտվել նաև Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայում: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 30.10.2009թ. թիվ ՎԴ/3275/05/08 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Սույն գործով «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպությունն Օրհուսի կոնվենցիայի իմաստով «շահագրգիռ» կազմակերպություն է, հետևաբար, օգտվում է այդ կազմակերպության կանոնադրական նպատակներից բխող, շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող հարցով դատական պաշտպանության իրավունքից»:

Հասարակական կազմակերպությունների կամ այլ միավորումների կողմից կոլեկտիվ իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության հարցերին է անդրադարձել նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն: Ըստ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի՝ «Վարչական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության մասին» (2004)20 հանձնարարականի՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները խրախուսում են քննության առնել այն հարցը, թե արդյո՞ք դատական վերահսկողության մատչելիությունը պետք է երաշխավորվի նաև այն միավորումների կամ այլ անձանց կամ մարմինների համար, որոնք իրավասու են պաշտպանել կոլեկտիվ կամ համայնքային շահեր:

Թիվ ՎԴ/3275/05/09 գործով ՀՀ վարչական դատարանի 09.07.2009թ. որոշմամբ «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն», «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» և «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպությունների հայցադիմումի ընդունումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ վերջիններս ակնհայտորեն չունեն հայցադիմումում ներկայացված պահանջներով դատարան դիմելու իրավունք, քանի որ այդ հասարակական կազմակերպությունների իրավունքները, վիճարկվող պահանջներով, չեն խախտվել և չեն շոշափվել: ՀՀ վարչական դատարանի 28.07.2009թ. որոշմամբ ՀՀ վարչական դատարանի 09.07.2009թ. որոշման դեմ Կազմակերպության և «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության բողոքը մերժվել է միևնույն պատճառաբանությամբ: Վճռաբեկ դատարանի 30.10.2009թ. որոշմամբ Կազմակերպության և «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել և փոփոխվել է ՀՀ վարչական դատարանի 28.07.2009թ. որոշման՝ Կազմակերպության բողոքը մերժելու մասը: Կազմակերպության բողոքը բավարարվել է: Որոշման՝ «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության բողոքը մերժելու մասը, թողնվել է օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանը վերոնշյալ որոշմամբ անհիմն է համարել Դատարանի կողմից «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կիրառման հիմքով «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպության հայցադիմումի ընդունման մերժումը: Դատարանի 24.03.2010թ. վճռով մերժվել է Կազմակերպության հայցն այն պատճառաբանությամբ, որ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը, Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 3-րդ կետը հասարակական կազմակերպություններին չի օժտում դատավարական իրավասուբյեկտությամբ:

Նույն գործով կրկին ներկայացված վճռաբեկ բողոքի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը 01.04.2011թ. որոշմամբ գտել է, որ վիճարկվող դատական ակտը հիմնավոր է և բխում է ՀՀ օրենսդրության կարգավորման նպատակներից, ընդ որում վկայակոչվել է ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-906 որոշումը:

ՀՀ սահմանադրական դատարանն, իր 2012թ. տարեկան հաղորդմամբ անդրադառնալով Վճռաբեկ դատարանի որոշմանը, վերահաստատել է իր իրավական դիրքորոշումն այն մասին, որ «...հասարակական կազմակերպություններին հնարավորություն է ընձեռվում հանդես գալ որոշակի խմբի կոլեկտիվ իրավունքների պաշտպանությամբ, եթե այդ պաշտպանությունը տվյալ հասարակական կազմակերպության կոնկրետ նպատակների շրջանակներում է» և արձանագրել, որ «... ՀՀ վարչական դատարանը, նույն կերպ նաև 01.04.2011թ. ՀՀ վճռաբեկ դատարանը, սխալ են մեկնաբանել ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-906 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը հասարակական կազմակերպությունների դատավարական իրավասուբյեկտության վերաբերյալ՝ վերջիններիս զրկելով իրենց կանոնադրական նպատակներից բխող հարցերի առնչությամբ դատարան դիմելու իրավունքից»:

Դիմումատու կազմակերպության (կազմակերպությունների) կանոնադրական նպատակներից բխում է ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանությունը, կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը, ինչպես նաև ընտրությունների և հանրաքվեի օրինականության նկատմամբ վերահսկողության իրականացումը, այլոց իրավունքների որոշակի խմբի կոլեկտիվ իրավունքի պաշտպանությունը:

- **Տարածքային ընտրական հանձնաժողովն իրավասու չէր կայացնելու վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում՝ վիճարկվող որոշմամբ բերված հիմնավորումներով դիմողների ոչ իրավասու սուբյեկտ ճանաչելու հիմքով:**

Թիվ 7 տարածքային հանձնաժողովի կողմից վարչական վարույթ հարուցելու փուլում դիմում-բողոքում վկայակոչված իրավունքների խախտման փաստերը և դրանով պայմանավորված դիմումատուի՝ բողոքարկման սուբյեկտ լինելու հանգամանքի իրավական գնահատականը չէին կարող հանձնաժողովի քննարկման առարկա դառնալ վարչական վարույթ հարուցելու փուլում, ինչը հանգեցրել է վեռջինիս լիազորությունների սահմանազանցմանը՝ ՀՀ ընտրական օրենսգրքի և «Վարչարարության և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ: Դիմումատուի նյութական իրավունքների խախտումների առկայության կամ բացակայության փաստին իրավական գնահատական կարող է տրվել միայն վարչական մարմնի կողմից գործի ըստ էության քննության փուլում:

Տարածքային ընտրական հանձնաժողովը, ՀՀ ընտրական օրենսգրքի նորմերին խիստ սահմանափակ և ՀՀ Սահմանադրության 48-րդ և 50-րդ հոդվածների պահանջներին հակասող մեկնաբանություն տալու արդյունքում, խախտել է նաև դիմողների՝ Սահմանադրությամբ ամրագրված պատշաճ վարչարարության իրավունքը և զրկել նրանց վարչական մարմնի կողմից իրենց առնչվող գործով քննության իրավունքից:

Վիճարկվող որոշումը ոչ իրավաչափ է նաև՝ դիմողների կողմից տարածքային ընտրական հանձնաժողովին ներկայացված միջնորդությունները վերջինիս կողմից նիստով մերժելու և դրա հետևանքով վարչական վարույթի բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության պարտադիր պահանջների խախտման հիմքով:

Այսպես «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի ուժով վարչական մարմինը, վարույթի մասնակիցների միջնորդությամբ որպես վկա հրավիրում և լսում է այն անձանց ցուցմունքները, որոնց կարող են հայտնի լինել տվյալ գործին վերաբերող տեղեկություններ:Նույն օրենքի 45-րդ հոդվածի վարչական մարմինը, անհրաժեշտության դեպքում, կարող է նշանակել նաև ֆիզիկական անձի, տեղանքի, որևէ օբյեկտի կամ առարկայի զննում, որին կարող են ներկա գտնվել վարույթի մասնակիցները:Միաժամանակ նույն օրենքի 75-րդ հոդվածին համապատասխան՝ վարչական մարմինը վարչական բողոքը քննարկելիս առաջնորդվում է ինչպես գործում առկա, որպես էլ լրացուցիչ ներկայացվող ապացույցներով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված է նաև վարչական վարույթի բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության սկզբունքը, ըստ որի վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:Վարչական մարմինն իրավունք չունի չընդունելու վարչական վարույթի մասնակիցների ներկայացրած՝ վարույթին առնչվող դիմումների և փաստաթղթերը, որոնց քննարկումը մտնում է իր իրավասության մեջ:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ներկայացված միջնորդությունները մերժումը հանգեցրել է դիմողների՝ ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածով երաշխավորված պատշաճ վարչարարության իրավունքի խախտմանը՝ դուրս գալով իրեն վերապահված լիազորությունների շրջանակից:

Որոշումը իրավաչափ չէ նաև դիմումատուների կողմից տարածքային ընտրական հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին չծանուցված լինելու փաստով:

Դիմողներին տարածքային ընտրական հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին չծանուցելու հետևանքով խախտվել է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ: Հանձնաժողովի վերոհիշյալ գործողությունները ուղղակիորեն հանգեցրել են նաև գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության ապահովման օրենսդրական պահանջի խախտմանը:

Այս առումով հարկ է նշել, որ նույնանման փաստական հանգամանքների նկատմամբ տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից ցուցաբերվել է տարբերակված մոտեցում:Մասնավորապես՝ տարածքային ընտրական հանձնաժողովների մի մասը հրավիրել և ծանուցել է դիմումատուին հանձնաժողովի կայանալիք նիստի մասին և քննարկել է ներկայացված բողոք-դիմումները ըստ էության, իսկ որոշները՝ ոչ, ինչով և խախտվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի դրույթը, որի համաձայն՝ Վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակված որևէ հիմք:

Որոշումը իրավաչափ չէ նաև հետևյալ պատճառաբանությամբ

Տարածքային ընտրական հանձնաժողովը նշելով դիմում-բողոքի 1, 5, 6, 7, 8 և 9 կետերն եզրահանգել է, որ որ դիտորդի իրավունքների ՀՀ ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասի խախտում առկա չէ, քանի որ <<ինչպես նշված է դիմումում դիտորդը պահանջել է գռարում կատարել ամփոփման նիստի ժամանակահատվածում>>(ըստ երևույթին, հանձնաժողովը նկատի է ունեցել դիմում-բողոքի 8-րդ կետը):

Այս առումով, հարկ է նշել, որ տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ՀՀ ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասի դրույթի մեկնաբանությունը չի բխում ՀՀ ընտրական օրենսգրքի էությունից: Մասնավորապես՝ ընտրական հանձնաժողովը վիճարկվող որոշմամբ ՀՀ ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասի խախտման բացակայությունը

պատճառաբանել է նրանով, որ դիտորդը պահանջել է գրառում կատարել ամփոփման նիստի ժամանակահատվածում:

Համաձայն հիշյալ հոդվածի՝ եթե դիտորդը գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա իրավունք ունի պահանջելու, որ իր գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Ուստի տարածքային ընտրական հանձնաժողովը գտել է, որ մեջբերված դրույթում օրենսդիրի կիրառած <<քվեակության ընթացքում>> արտահայտությունը իր մեջ չի ներառում նաև քվեակության արդյունքներն ամփոփելու ժամանակահատվածը:

Գտնում ենք, որ նման մեկնաբանությունը խիստ սահմանափակ է և հակասում է ընտրական օրենսգրքի դրույթներին, հաշվի առնելով դիտորդի կարգավիճակից բխող վերջինիս համար նախատեսված իրավունքները: Հետևաբար,<<քվեարկության կարգի խախտումը տեղի է ունեցել քվեարկության ընթացքում>> արտահայտությունը պետք է հասկանալ այն բացարձակ իմաստով, որ <<քվեարկության ընթացք>> հասկացությունն իր մեջ ներառում է ոչ միայն զուտ օրենքով սահմանված քվեարկության օրվա 08:00-20:00 ժամանակահատվածը, այլ նաև քվեարկության նախապատրաստական փուլը, քվեարկության արդյունքների ամփոփման փուլը, ինչպես նաև դիտորդի՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված վերջինիս դիտարկման համար հասանելի է ընտրության գործընթացի ցանկացած փուլ:

Ավելին, հենց նույն դիմում-բողոքում ներկայացված են ամփոփման նիստի խախտումներ, որոնք դիտորդի պահանջով գրանցվել են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում/դիմում-բողոքի 11 կետի Գ,Դ ենթակետեր/

Տարացքային ընտրական հանձնաժողովի որոշումը ոչ իրավաչափ է նաև հետևյալ պատճառաբանությամբ. Տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից խախտվել է նաև դիմողի ընտրական իրավունքը, ինչպես նաև դիտորդի կարգավիճաքից բխող սուբյեկտիվ իրավունքները, քանի որ տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից դիմում-բողոքի քննության նիստը նշանակվել է մայիսի 19-ին ժամը 15:00-ին, ինչն ինքնին զրկել է դիմողներին որոշման դեմ ներկայացված բողոքը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից մինչև Երևանի ավագանու ընտրությունների արդյունքների ամփոփումը քննելու և արդյունքների ամփոփման շրջանակներում այն գնահատելու հնարավորությունից:Այսպիսով, խախտվել է նաև դիմորդների իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

3.Պահանջը

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգրքի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթներով՝ խնդրում ենք

1. Մասնակի անվավեր ճանաչել /թիվ 7/29 և 7/33 տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների ընտրական հանձնաժողովում ընդգրկելու որակավորման վկայականների ուժը կորցրած ճանաչելու միջնորդություններին չվերաբերող մասով / թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 19.05.2017թ. թիվ 18-Ա որոշումը.

ձեռնարկել միջոցներ՝

2. վերոգրյալ խախտումների կապակցությամբ արդյունավետ քննության և օրենսդրությամբ սահմանված միջոցների ձեռնարկման ուղղությամբ.

3. խախտումներ կատարած անձանց և դրանք արձանագրելու և վերացնելու պատասխանատու անձանց օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ.

4. համապատասխան սուբյեկտների իրավունքների խախտումների արձանագրման և դրանք ըստ հնարավորության, վերացնելու ուղղությամբ.

5. հիմքերի առկայության դեպքում, այդ թվում՝ քրեաիրավական բնույթի խախտումները վերահասցեագրել ըստ ենթակայության.

6. քննարկել և գնահատել հիշյալ խախտումների ազդեցությունը նշված տեղամասերում քվեարկության արդյունքների վրա և համապատասխան տեղամասերում նշանակել

վերաքվեարկություն կամ անվավեր ճանաչել Երևանի քաղաքի ավագանու ընտրությունները և նշանակել վերաքվեարկություն»:

2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պատճառաբանությունները, հիմնավորումները և եզրահանգումը

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ուսումնասիրել է դիմում-բողոքը, ներկայացված լիազորագրերը, կից փաստաթղթերը, ինչպես նաև թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովից պահանջված և ստացված 19.05.2017թ. թիվ 18-Ա որոշման ու վերջինիս ընդունման համար հիմք հանդիսացած վարչական վարույթի նյութերը:

Դիմում-բողոքով ներկայացված են փաստական հանգամանքներ, որոնք ներկայացվել էին նաև թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքներով և շարադրված են այնպիսի հանգամանքներ, որոնք առնչվում են քվեարկության օրվան և վերաբերում են առանձին տեղամասերին:

Դիմում-բողոքով ներկայացված են փաստական հանգամանքներ, որոնք ներկայացվել էին նաև թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքներով և շարադրված են այնպիսի հանգամանքներ, որոնք առնչվում են քվեարկության օրվան և վերաբերում են առանձին տեղամասերին:

2. Դիմում-բողոքում նշված է, որ «դիմում-բողոքի 1, 5, 6, 7, 8 և 9 կետերում նշված խախտումներին,տարածքային ընտրական հանձնաժողովը գտել է, որ դրանցով խախտվել են դիտորդների սուբյեկտիվ իրվունքը՝ նրանց պահանջով խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը չի գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:Այդ մասով ընտրական հանձնաժողովը որոշում է կայցրել միջնորդել կենտրոնական ընտրական հանձնաժողովին ուժը կորցրած ճանաչել թիվ 7/29 տեղամասային հանձնաժողովների նախագահ Հովսեփ Տիգրանի Ղազարյանի և թիվ 7/33 տեղամասային հանձնաժողովների նախագահ Վարդան Ռաֆիկի Վարդանյանի ընտրական հանձնաժողովներում ընդգրկվելու որակավորման վկայականները:»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը փաստում է, որ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովը դիմում-բողոքով ներկայացված նշված հանգամանքները գնահատել է որպես հաղորդում և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով 19.05.2017թ. կայացրել է թիվ 19-Ա որոշումը:

Դիմում-բողոքում նշված է, որ «տարածքային ընտրական հանձնաժողովը կրկին նշելով դիմում-բողոքի 1,5,6,7,8 և 9 կետերն այս անգամ եզրահանգել է, դիտորդի իրավունքների ՀՀ ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասի խախտում առկա չէ, քանի որ «ինչպես նշված է դիմումում դիտորդը պահանջել է գռարում կատարել ամփոփման նիստի ժամանակահատվածում» (ըստ երևույթին, հանձնաժողովը նկատի է ունեցել դիմում-բողոքի 8-րդ կետը)»: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ուսումնասիրելով թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 18-Ա որոշումը փաստում է, որ առկա է վրիպակ (որը ընդունում է նաև դիմումատու կողմը) և տարածքային ընտրական հանձնաժողովի եզրահանգումը վերաբերվում է դիմում-բողոքի թիվ 8 պայմանական թվագրմամբ կետին:

Ինչ վերաբերում է գրանցամատյանում դիտորդի գնահատականը չգրանցելուն, ապա նշվածը ենթադրյալ խախտում որակելու համար որպես իրավական հիմք վկայակոչվում է ՀՀ ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասը, համաձայն որի՝

«Եթե հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել սույն օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա իրավունք ունեն պահանջելու, որ իրենց գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:»:

Վերոնշյալ իրավանորմի վերլուծությունը թույլ է տալիս փաստելու, որ տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրելու որևէ գնահատական (ենթադրյալ խախտում)՝ միայն հետևյալ պայմանների պահպանմամբ.

ա) **ներկայացվել է** գնահատականը (ենթադրյալ խախտումը) տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրելու պահանջ,

բ) նման պահանջ է ներկայացրել **հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը**,

գ) պահանջ ներկայացնողը գտնում է, որ **տեղի է ունեցել Ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում**,

դ) քվեարկության կարգի խախտումը տեղի է ունեցել **քվեարկության ընթացքում:**

Միայն վերը թվարկված բոլոր պայմանների պահպանման դեպքում է տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրելու պահանջ ներկայացնող անձի գնահատականը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև վիճարկվող որոշումն ընդունելը թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել էր իր սպասարկման տարածքում կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում կատարված գրառումները և դրանցում նշված հանգամանքները գնահատել վարչական վարույթի շրջանակներում ընդունած 18.05.2017թ. թիվ 16-Ա որոշմամբ, ուստի բողոքում ներկայացված մյուս հանգամանքները արդեն իսկ հանդիսացել էին գնահատման առարկա և թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովն իր դիրքորոշումն արտահայտել է 2017 թվականի մայիսի 18-ի «Երևանի ավագանու 2017 թվականի մայիսի 14-ի ընտրությունների տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ» թիվ 16-Ա որոշմամբ, ինչով էլ պայմանավորված վիճարկվող որոշմամբ դրանց անդրադարձ չի կատարվել:

3. Դիմումատուները, ներկայացնելով իրենց ընդհանուր բնույթի դատողություններն օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու իրավասուբյեկտության վերաբերյալ, մասնավորապես, նշում են, որ «դիտորդի և դիտորդական կազմակերպության՝ ոչ իրավասու սուբյեկտ հանդիսանալու վերաբերյալ եզրահանգումը կատարվել է ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասին՝ ՀՀ Սահմանադրության 48-րդ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածների դրույթներին հակասող և կամայական մեկնաբանություն տալու արդյունքում:»: Նաև նշվում է. «Ընտրությունների ընթացքում արձանագրված ընտրախախտումները իրենց համակցության մեջ և/կամ բնույթով կարող են ուղղակի ազդեցություն ունենալ յուրաքանչյուր ընտրողի քվեի հասցեականության վրա, ինչպես նաև յուրաքանչյուր քաղաքացու ընտրելու իրավունքի իրացման վրա առհասարակ: Ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտ հանդիսացող յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ դիտորդի և դիտորդական կազմակերպության կողմից ներկայացված դիմում-բողոքները՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների հիմքով ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների վիճարկման վերաբերյալ ենթակա են քննության վարչական վարույթի կարգով, նույն կարգով, ինչ դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտումների վերաբերյալ բողոքները՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի շրջանակներում: Հակառակ մեկնաբանությունը կհանգեցնի ընտրական իրավունքի էության խախտմանը:»:

Վերը նշված դատողությունների համար որպես իրավական հիմք դիմումատուները վկայակոչում են ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասը, ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածը, ինչպես նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածը:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 3-ին մասի համաձայն.

«Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու, տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:»:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածի համաձայն՝

«Յուրաքանչյուր քաղաքացի, առանց 2-րդ հոդվածում հիշատակվող որևէ խտրականության և առանց անհիմն սահմանափակումների, պետք է իրավունք և հնարավորություն ունենա.

ա) մասնակցելու պետական գործերը վարելուն՝ ինչպես անմիջականորեն, այնպես էլ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով.

բ) քվեարկել և ընտրվել իսկական պարբերական ընտրություններում, որոնք անց են կացվում համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, և ապահովում են ընտրողների կամքի ազատ արտահայտումը.

գ) իր երկրում հավասարության ընդհանուր պայմաններով մտնել պետական ծառայություն:»:

Ընտրական գործընթացում քաղաքացու դրությունը դրսևորվում է «ընտրողի իրավական կարգավիճակում»: Ընտրողի իրավական կարգավիճակի բովանդակությունը բխում է նրա իրավունքից՝ ընտրելու համապատասխան ընտրությունների ժամանակ, որոշվում է ընտրական օրենսդրությամբ սահմանված որոշակի գործողություններ կատարելու իրավունքներով, որոնք կապված են նախընտրական քարոզչությանը, քվեարկությանը մասնակցելու հետ և այլն: Ընտրողի իրավունքները կարող են ընդարձակվել կոնկրետ դեպքում վերջինիս կողմից ընտրական գործընթացում կոնկրետ գործառույթ կատարելիս՝ որպես թեկնածու, վստահված անձ, հանձնաժողովի անդամ, դիտորդ և այլն, որոնք սահմանված են ՀՀ ընտրական օրենսգրքով:

Յուրաքանչյուր ոք ընտրական իրավահարաբերություններում, ելնելով օրենսդրությամբ սահմանված հստակ չափորոշիչներից և պահանջներից՝ հանդես է գալիս հստակ սահմանված որևէ կարգավիճակով (ընտրող, թեկնածու, դիտորդ և այլն), ընդ որում նշված կարգավիճակով հանդես եկող անձը օժտված է հստակ սահմանված իրավունքներով և պարտականություններով: ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավունքի նորմերով երաշխավորված ընտրելու իրավունքի իրացման, այդ թվում նաև պաշտպանության, հստակ կառուցակարգերը սահմանված են ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքով:

Քննարկվող դիմում-բողոքով դիմումատուները ներկայանում են որպես հասա-րական կազմակերպություն և որպես դիտորդ, այլ ոչ թե որպես անձ, ում ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը խախտվել է:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովը դիմումատուներին դիտել է հենց այդ կարգավիճակում՝ որպես դիտորդ կամ հասարակական կազմակերպություն՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքների վարչաիրավական կարգով պաշտպանության կառուցակարգերը սահմանված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:»: Նշված իրավանորմի հաշվառմամբ, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ի մասում ամրագրված իրավանորմով սահմանված է. «Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում:»:

Վերոնշյալ իրավանորմերից բխում է, որ ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթի նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի նորմերը կիրառելի են միայն ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

Ի թիվս այլ առանձնահատկությունների, ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթի առանձնահատկություն է սահմանված ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին

մասի 4-րդ պարբերությամբ, որի համաձայն՝ եթե բողոքը կամ դիմումը չի համապատասխանում նույն հոդվածի պահանջներին, ապա դիմումները չեն քննարկվում, դրանցով վարչական վարույթներ չեն հարուցվում, և ընտրական հանձնաժողովները որոշում են կայացնում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին: Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածով սահմանված՝ բողոքին կամ դիմումին ներկայացվող պահանջներից է դիմումը կամ բողոքը 48-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սուբյեկտների կողմից ներկայացնելու պահանջը:

ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասում օրենսդիրն առանձնացնում է սուբյեկտների հինգ խումբ, որոնց իրավունք է վերապահում բողոքարկելու ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը), այն է՝

1) յուրաքանչյուր ոք, ով գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ սույն օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը.

2) վստահված անձը, եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը.

3) դիտորդը կամ այցելուն, եթե գտնում է, որ խախտվել է իր՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը.

4) զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, եթե գտնում է, որ խախտվել է իր՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը.

5) ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը, եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդ կուսակցության կամ կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը:

ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված նորմի վերլուծության արդյունքում Կենտրոնական ընտրական հանձաժողովը գտնում է, որ օրենսդիրը, ամրագրելով վերոհիշյալ սուբյեկտային կազմը՝ ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու իրավունքը, միաժամանակ այդ իրավունքի իրացման հնարավորությունը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պայմանավորում է բողոքարկող սուբյեկտի իրավունքի պաշտպանության նպատակի առկայությամբ, այսինքն՝ յուրաքանչյուր կոնկրետ սուբյեկտի իրավունք է վերապահում բողոքարկելու ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը), եթե նման բողոքարկումը նպատակ ունի իրականացնելու բողոքարկող սուբյեկտի խախտված իրավունքի պաշտպանությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ դիմումատուների դատողությունն առ այն, որ «ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտ հանդիսացող յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ դիտորդի և դիտորդական կազմակերպության կողմից ներկայացված դիմում-բողոքները՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների հիմքով ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների վիճարկման վերաբերյալ ենթակա են քննության վարչական վարույթի կարգով, նույն կարգով, ինչ դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտումների վերաբերյալ բողոքները», չի բխում ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի՝ օրենսդրի կողմից ներդրված տրամաբանությունից: Ուստի, թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 19.05.2017թ. թիվ 18-Ա որոշմամբ վարչական վարույթի հարուցումը մերժելն այն հիմնավորմամբ, որ դիմումատուները չեն հանդիսանում տարածքային ընտրական հանձնաժողովին հասցեագրված դիմում-բողոքում վկայակոչվող իրավունքների (բացառությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում գրառում կատարելու պահանջի մասով) պաշտպանությամբ դիմելու իրավունք ունեցող իրավասու սուբյեկտներ, իրավաչափ է:

ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածում ներդրված վերոհիշյալ տրամաբանությունն արտահայտված է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածում, որը ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ կիրառելի է ընտրական հանձնաժողովում վարչական վարույթի նկատմամբ՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ: Համաձայն նշված օրենքի 69-րդ հոդվածի՝ անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները, ինչպես նաև վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը:

Նշված դրույթի բովանդակությունից բխում է, որ վարչական կարգով բողոք ներկայացնելու իրավունքը վերապահվում է այն անձանց, ովքեր բողոքարկման միջոցով պաշտպանում են ***իրենց*** խախտված իրավունքները:

4. Դիմումով դիմումատու է հանդիսանում նաև «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպությունը: Անդրադառնալով հասարակական կազմակերպություն-ների իրավասուբյեկտության հարցին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը բազմիցս իր դիրքորոշումն արտահայտել է իր մի շարք որոշումներով (08.04.2017թ. թիվ 156-Ա, 02.05.2017թ. թիվ 178-Ա, 179-Ա, 180-Ա, 181-Ա, 182-Ա և այլ որոշումներով)՝ ամրագրելով, որ դիմումատու հասարակական կազմակերպությունը չի հանդիսանում նշված հարցով դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտ, ուստի նրա անունից ներկայացված դիմումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:

Նշված հարցով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հայտնած, ինչպես նաև վերջինիս կողմից ընդունված որոշումներում արձանագրված իրավական դիրքորոշումները և պատճառաբանությունները կիրառելի են նաև սույն դիմում-բողոքով որպես դիմումատու հան-դես եկող հասարակական կազմակերպության իրավասուբյեկտության հարցի վերաբերյալ: Հասարակական կազմակերպությունների իրավասուբյեկտ հանդիսանալու հանգամանքի կապակցությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերը հիշատակված իրավական գնահատականները համահունչ են նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի և վարչական դատարանի մի շարք գործերով կայացված դատական ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումներին:

Հետևապես, թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովին հասցեագրած դիմում-բողոքով դիմումատու հասարակական կազմակերպությունը դիմում ներկայացնող իրավասու սուբյեկտ չէ, և հիմք ընդունելով Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությունը, դիմումատու հասարակական կազմակերպության մասով թիվ 3 տարածքային ընտրական հանձնաժողովը դիմում-բողոքով վարչական վարույթի հարուցումն իրավաչափորեն մերժել է:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպության մասով սույն դիմում-բողոքը ենթակա է մերժման:

5. Անդրադառնալով դիմում-բողոքում նշված դիմումատուների դատողությանն առ այն, որ «տարածքային ընտրական հանձնաժողովն իրավասու չէր կայացնելու վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում՝ վիճարկվող որոշմամբ բերված հիմնավորումներով դիմողների ոչ իրավասու սուբյեկտ ճանաչելու հիմքով» և որ «թիվ 7 տարածքային հանձնաժողովի կողմից վարչական վարույթ հարուցելու փուլում դիմում-բողոքում ներկայացված իրավունքների խախտման փաստերը և դրանով պայմանավորված դիմումատուների՝ բողոքարկման սուբյեկտ լինելու հանգամանքի իրավական գնահատականը չէին կարող հանձնաժողովի քննարկման առարկա դառնալ վարչական վարույթ հարուցելու փուլում: …Դիմումատուների նյութական իրավունքների խախտումների առկայության կամ բացակայության փաստին իրավական գնահատական կարող է տրվել միայն վարչական մարմնի կողմից գործի ըստ էության քննության փուլում», հիմնազուրկ է և չի բխում ինչպես «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջներից:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝

«1. Վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից:

2. Վարչական վարույթը հարուցվում է անձի (անձանց) դիմումի կամ վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա (հարուցման փուլ):

3. Դիմումին կամ վարչական մարմնի նախաձեռնությանը համապատասխան իրականացվում են վարչական գործի քննարկման հետ կապված՝ սույն օրենքով նախատեսված գործառույթները (ընթացիկ փուլ):

4. Վարչական վարույթը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ):»:

Նույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

«1. Վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝

ա) անձի դիմումը, բողոքը.

բ) վարչական մարմնի նախաձեռնությունը:

2. Սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքերում վարչական վարույթը համարվում է հարուցված՝ համապատասխան դիմումը կամ բողոքը վարչական մարմնում ստանալու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ դիմումը կամ բողոքը, սույն օրենքի 33-րդ հոդվածի համաձայն, վերահասցեագրվել է ըստ իրավասու վարչական մարմինների կամ վերադարձվել է դիմողին (բողոք բերողին):»:

Վերը նշված նորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ, որպես ընդհանուր կանոն, դիմումի հիմքով վարչական վարույթը ***համարվում է հարուցված՝*** դիմումը վարչական մարմնում ստանալու օրվանից՝ առանց վարչական մարմնի կողմից վարչական վարույթ հարուցելուն ուղղված որևէ գործողություն կատարելու կամ ընթացակարգ կիրառելու: Հետևաբար, վարչական վարույթի հարուցման փուլում որևէ հարցի գնահատական տալ առհասարակ հնարավոր չէ, քանի որ դիմումի մուտքագրման փաստ ինքնստինքյան հանգեցնում է վարչական վարույթի հարուցմանը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթի իրականացման կանոնակարգումներ սահմանող ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածը, ի թիվս այլ առանձահատկությունների, սահմանում է նաև ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթի և վարչարարության առանձնահատկություն հանդիսացող՝ *վարչական վարույթի հարուցումը մերժելու իրավական ինստիտուտը*, ինչը աներկբա նշանակում է, որ ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթը դիմումի ստացմամբ հարուցված չի համարվում և ընտրական հանձնաժողովը դիմումի ուսումնասիրության արդյունքում կարող նաև մերժել դիմումով վարչական վարույթի հարուցումը: Նշվածը միանշանակ ենթադրում է, որ ընտրական հանձնաժողովներում մինչ դիմումով վարչական վարույթի հարուցումը դիմումն ուսումնասիրվում է առնվազն հետևյալ պայմաններին համապատասխանելու տեսանկյունից.

ա) դիմումը ստորագրված է դիմողի կողմից,

բ) դիմումը ներառում է տվյալներ դիմումատուի վերաբերյալ,

գ) դիմումում ներկայացված չեն դիմումատուի վերաբերյալ կեղծ տվյալներ,

դ) դիմումը ներկայացված չէ իրավունքի չարաշահմամբ,

ե) դիմումը ներկայացված է ոչ իրավասու անձի կողմից,

զ) ներկայացուցչի միջոցով ներկայացված դիմումին կից ներկայացված է նաև օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր,

է) դիմումը ներկայացված է իրավասու ընտրական հանձնաժողով,

ը) դիմումը ներկայացված չէ Ընտրական օրենսգրքով սահմանված վերջնաժամկետից ուշ:

Միայն նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է ընտրական հանձնաժողով ներկայացված դիմումով կամ բողոքով հարուցվում վարչական վարույթ: Թվարկված պայմաններից ա)-ից զ) կետերում նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում վարչական վարույթի հարուցումը մերժվում է, իսկ է) և ը) կետերում նշված պայմանների բացակայության դեպքում՝ դիմումը՝ կից փաստաթղթերով վերադարձվում է դիմումատուներին:

Նշված երկու դեպքերում էլ՝ և վարչական վարույթի հարուցումը մերժելու, և դիմումը՝ կից փաստաթղթերով վերադարձնելու, կիրառելի չեն վարչական վարույթի հարուցման դեպքում վարույթի իրականացմանն ուղղված կանոնակարգումները, մասնավորապես՝ փաստական հանգամանքների քննարկման ապահովումը, լսումներ անցկացնելը, դիմումին առնչվող՝

դիմումատուների միջնորդությունները քննարկելը, ապացույցներ հետազոտելը և այլն: Փոխարենը ընտրական հանձնաժողովը իրավասու է սեփական նախաձեռնությամբ հարուցելու վարչական վարույթ և քննարկելու այն հանգամանքները, որոնք ներկայացված լինելով դիմումներով և բողոքներով՝ ընտրական հանձնաժողովի կողմից ընդունվել են որպես հաղորդումներ:

Ակնհայտ է, որ վարչական վարույթի հարուցումը մերժելու ինստիտուտի կիրառումը դիմումատուների կողմից նշված տրամաբանությամբ կիմաստազրկվի այդ իրավական ինստիտուտը, քանի որ վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական վարույթի հարուցումը այլևս չի կարող մերժվել:

6. Դիմումատուներն իրենց դիմում-բողոքում ներկայացնում են դատողություն առ այն, նիստի օրվա և ժամի մասին դիմումատուները չեն ծանուցվել: Թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը որպես ապացույց ներկայացրել է թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովին հասցեագրած դիմումատուների դիմում-բողոքում նշված հեռախոսահամարներին ուղարկված կարճ հաղորդագրությունը: Ավելին, թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանի ուսումնասիրությամբ փաստվում է, որ դիմումատուները մասնակցել են նիստին, ինչի մասին առկա է գրառում:

Դիմումատուներն իրենց դիմում-բողոքում ներկայացնում են դատողություն առ այն, որ «Տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից խախտվել է նաև դիմողների ընտրական իրավունքը, ինչպես նաև դիտորդի կարգավիճակից բխող սուբյեկտիվ իրավունքները, քանի որ տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից դիմում-բողոքի քննության նիստը նշանակվել է մայիսի 19-ին ժամը 15:00-ին, ինչն ինքնին զրկել է դիմողներին որոշման դեմ ներկայացված բողոքը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից մինչև Երևանի ավագանու ընտրությունների արդյունքների ամփոփումը քննելու և արդյունքների ամփոփման շրջանակներում այն գնահատելու հնարավորությունից: Այսպիսով, խախտվել է նաև դիմողների իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:»: Անհասկանալի է դիմումատուների կողմից ընտրական իրավունքի խախտման հանգամանքի վկայակոչումը, չի հստակեցվում, թե տարածքային ընտրական հանձնաժողովն ինչ կարգով է խախտել դիմողների ընտրական իրավունքը՝ նիստը 19.05.2017թ. ժամը 15:00-ին նշանակելով: Եվ առհասարակ ինչպես է խախտվել «դիմողների իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը», քանի որ Ընտրական օրենսգիրքը հստակ կանոնակարգում է դիմումներ ներկայացնելու կարգը և քննելու ժամկետները: Համաձայն Ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում:»:

Համաձայն Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 7-րդ մասի.

«Տարածքային և Կենտրոնական ընտրական հանձնաժողովներն ընտրությունները նշանակվելուց հետո՝ մինչև քվեարկության նախորդ օրը, ստացված դիմումներին պատասխանում, իսկ սույն օրենսգրքով սահմանված դեպքերում դրանց վերաբերյալ որոշումներ ընդունում են հնգօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան մինչև քվեարկության սկիզբը: Քվեարկության օրվանից սկսած՝ մինչև արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ ժամը 18.00-ն, ստացված դիմումներին տարածքային և Կենտրոնական ընտրական հանձնաժողովները պատասխանում, իսկ սույն օրենսգրքով սահմանված դեպքերում դրանց վերաբերյալ որոշումներ ընդունում են մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը, իսկ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ՝ տարածքային ընտրական հանձնաժողովը՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից մեկ օր առաջ:»:

Վերոնշյալ դրույթների վերլուծությունից ակնհայտ է, որ տարածքային ընտրական հանձնաժողովը գործել է ՀՀ ընտրական օրենսգրքին համապատասխան և որոշում է կայացրել ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետում, ուստի տարածքային ընտրական

հանձնաժողովը գործել է իրավաչափորեն, դիմումատուների արդյունավետ պաշտպանության իրավունք չի խախտել: Ավելին, դիմումատուներն օգտվել են իրավունքի պաշտպանության հնարավորությունից՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում դիմում-բողոք ներկայացնելով Կենտրոնական ընտրական հանձնաժողով, որը մուտքագրվել է, ուսումնասիրվել և որով հարուցվել է վարչական վարույթ:

Ավելին, ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) կարող են բողոքարկվել վարչական կամ դատական կարգով: Եթե ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) բողոքարկվել է և վարչական, և դատական կարգով, ապա վարչական վարույթը կարճվում է»: Նշված իրավանորմից ակնհայտ է, որ որոշման իրավաչափության բողոքարկումը վարչական կարգով՝ վերադաս ընտրական հանձնաժողով, սահմանված չէ որպես նախապայման դատական բողոքարկման համար, ինչը նշանակում է, որ դիմումի վերաբերյալ որոշումն ստանալուց հետո դիմողն ուներ ժամանակ բողոք ներկայացնելու վերադասության կարգով և ավելի երկար ժամանակ ներկայացնելու հայց դատական կարգով որոշման իրավաչափությունը վիճարկելու համար:

7. Սույն բողոքի քննարկմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 2017թ. մայիսի 19-ի թիվ 18-Ա որոշումը՝ վարչական վարույթի հարուցումը մերժելու մասով, իրավաչափ է հետևյալ պատճառաբանությամբ՝ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովն իր որոշումներով նշել է այն բոլոր էական փաստական հանգամանքները և իրավական հիմնավորումները, որոնք հիմք են հանդիսացել ընդունելու վիճարկվող որոշումը, որոշումները ձևակերպված են հստակ և հասկանալի:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ տարածքային ընտրական հանձնաժողովը պահպանել է վարչական ակտին ներկայացվող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-57-րդ հոդվածների և ՀՀ ընտրական օրենսգրքի 47-49-րդ հոդվածների պահանջները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սույն դիմում-բողոքով հարուցված վարչական վարույթով առկա փաստերի ուսումնասիրմամբ հիմնավորված է համարում թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի եզրահանգումները՝ վարչական վարույթի հարուցումը մերժելու մասով և նշված մասով գտնում է, որ ենթակա է մերժման դիմում-բողոքով ներկայացված պահանջը՝ մասնակի անվավեր ճանաչել թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 19.05.2017թ. թիվ 18-Ա որոշումն (թիվ 7/29 և 7/33 տեղամասային ընտրական հանձ-նաժողովների նախագահների ընտրական հանձնաժողովում ընդգրկելու որակավորման վկայականների ոժը կորցրած ճանաչելու միջնորդություններին չվերաբերող մասով) ինչպես նաև բողոքով ներկայացված 2-րդ, 4-րդ և 6-րդ (բացառությամբ՝ համապատասխան տեղամասերում նշանակել վերաքվեարկություն կամ անվավեր ճանաչել Երևան քաղաքի ավագանու ընտրությունները և նշանակել վերաքվեարկություն պահանջից) կետերի պահանջները, քանզի թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովը դիմում-բողոքում ներկայացված փաստական հանգամանքները, որոնք ներկայացված են եղել նաև համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում, ուսումնասիրել և իր 18.05.2017թ. թիվ 16-Ա որոշմամբ գնահատել է վերջիններիս ազդեցությունը քվեարկության արդյունքների վրա, իսկ մյուս մասը, որոնց վերաբերյալ գրանցամատյաններում գրառումներ առկա չեն եղել, ընդունել է դրանք որպես հաղորդում՝ սեփական

նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի շրջանակներում քննարկել և 19.05.2017թ. թիվ 19-Ա որոշմամբ գնահատել է դրանց ազդեցությունը տեղամասում քվեարկության արդյունքների վրա:

Դիմում-բողոքով ներկայացված 3-րդ կետի պահանջը նույնպես ենթակա է մերժման, քանի որ նշված պահանջը որևէ կերպ չի առնչվում դիմումատուների իրավունքներին, ինչով պայմանավորված, դիմումատուներն իրավասու չեն հանդես գալ նման պահանջով: Նշված հարցադրման վերաբերյալ դիրքորոշում է արտահայտել ՀՀ վարչական դատարանը ՎԴ/0929/05/15 վարչական գործի շրջանակներում կայացված որոշմամբ.

«... Դատարանը վերևում արդեն անդրադարձել է դիտորդների իրավունքներին, որոնք չեն ներառում նաև հանրային իրավախախտում թույլ տրված անձանց պատասխանատվության հարցով իրավասու մարմիններին դիմելու իրավունքը: Ինչպես նշվեց վերը, դիտորդներն ընդամենը ներկայացնում են իրենց դիտարկումները ընտրախախտումների վերաբերյալ, իսկ դրանց հետագա գնահատումն ու ընթացքը դուրս է նրանց վերահսկողության շրջանակներից: Ըստ այդմ, դատարանն արձանագրում է, որ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունը չի կարող պահանջել իրավասու ընտրական հանձնաժողովից համապատասխան գործողություններ՝ կապված վարչական կամ քրեական իրավախախտում կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման հետ:» (27.04.2015թ. ՎԴ/0929/05/15):

Դիմում-բողոքով ներկայացված 5-րդ կետի պահանջը նույնպես ենթակա է մերժման, քանի որ դիմումի ուսումնասիրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ դիմումն ըստ ենթակայության վերահասցեագրման հիմքեր առկա չեն:

Ինչ վերաբերում է դիմում-բողոքով ներկայացված 6-րդ կետի պահանջի այն հատվածին, որով պահանջվում է համապատասխան տեղամասերում նշանակել վերաքվեարկություն կամ անվավեր ճանաչել Երևան քաղաքի ավագանու ընտրությունները և նշանակել վերաքվեարկություն, ապա հիմք ընդունելով ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 13-15-րդ մասերը և ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով, դիմում-բողոքը՝ սույն պահանջի մասով, չի քննարկվում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 47-49-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .

1. «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպության և դիտորդներ Լիլիա Լորիկի Բայադյանի, Սարգիս Մեհրանի Բալխյանի և Սիրանուշ Մանուչարյանի դիմում-բողոքն ամբողջությամբ մերժել՝ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 19.05.2017 թվականի թիվ 18-Ա որոշումը թողնելով անփոփոխ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. Մուկուչյան**